Բ ՄԱՍ

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ

Ա. ՊԱՐԵՐԳԵՐ

1. Ա՜Խ, ՄԱՅՐԱՄ

Ա՜խ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ ջան քու ջանին հայրան։

Սար ու ձորեր ձուն գիկեր,
Մայրամ ղողնից տուն գիկեր.
Ա՜խ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ ջան քու ջանին հայրան։

Արա ու արոտ փշերով,
Մայրամ փախավ գիշերով.
Ա՜խ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ ջան քու ջանին հայրան։

Ձևնն ֆընկևր է գեղոց-գևղ,
Մայրամ մընի հալուկ ևղ.
Ա՜խ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ ջան քու ջանին հայրան։

Ֆելեք քոմով էրթանք խարս,
Մայրամ ֆոն է տարած հարս.
Ա՜խ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ ջան քու ջանին հայրան։

Հա՜յ, խավըրծիլ, հա՜յ օղին,
Էրնեկ քու ծոց պառկողին.
Ա՜խ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ ջան քու ջանին հայրան։

2. ԱՂՋԻ, ՇԻԼԵՆ ԾԱԼ ԷՐԵ

Աղ՛ջի, շիլեն ծալ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե.
Էդ քու թուֆթա թշներուց
Պաղիկ մե հալալ էրե.
Ծալ էրե, հա՜յ, ծա՛լ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե։

Աղ՛ջի, գեղըդ Խնուսա,
Բարով ու խերով տեսա,
Էս ախշարն ի՜նչ կը կորցու՝
Դառնամ քու մորկան փեսա.
Ծալ էրե, հա՜յ, ծա՛լ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե։

Աղ՛ջի, նստի, ծամ էրե,
Նուռ մե թալիմ՝ համ էրե,
Մեջն ինչ խդեր կուտ էղնի՝
Պագն ու պոչիկ թամ էրե.
Ծալ էրե, հա՜յ, ծա՛լ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե։

3. Ա՜Յ ՆՈՒՐԱՐ

Ա՜յ Նուբար, Նուրար, Նուրար,
Սասնու սարեր քարուրար։

Սասնու գևլներ բարակ ծուխ,
Կապիս փուշին, թողիս պուխ.
Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար։

Նուբար գնաց խիարնոց,
Քաղեց խիար լցեց ծոց.
Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար։

Նուբար կանավ ամրոցին,
Արև դպավ ուր ծոցին.
Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար։

Նուբար գացեր էր ժախի,
Ջիմ սիրտն էր ծամից կախի.
Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար։

Կր շորորեր՝ քընց մաքին,
Ոն տեսներ՝ յելներ հոգին.
Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար։

4. ԱՍՄԱՐ, ՅԱՄԱ՛Ն

Ասմար, յամա՛ն, յամա՛ն, յամա՛ն,
Դիլբար ու դալալո յամանն։

Ասմա՛ր, մի՛ գա, մեր տուն մուխ է,
Լուսնակ յերես, ընքներ թուխ է.
Ասմար, յամա՛ն, յամա՛ն, յամա՛ն,
Դիլրար ու դալալո յաման։

Ասմարն յելի կէրթեր մարագ,
Ուր ուտելիք մեղր ու կարագ.
Ասմար, յամա՛ն, յամա՛ն, յամա՛ն,
Դիլրար ու դալալո յաման։

Ասմար յելի կէրթեր բաղչեն,
Կր ղնզզնգեր ճակտի մաղչեն.
Ասմար, յամա՛ն, յամա՛ն, յամա՛ն,
Դիլրար ու դալալո յաման։

Ասմարն յելի կէրթեր էդին,
Ինքն էր ու ջուխտակ տեգերկին.
Ասմար, յամա՛ն, յամա՛ն, յամա՛ն,
Դիլրար ու դալալո յաման։

Ասմար կէրթեր բաղեր օղին,
Ա՜խ, ոլաք մե տենք վղի դողին.
Ասմար, յամա՛ն, յամա՛ն, յամա՛ն,
Դիլրար ու դալալո յաման։

5. ԲՈՒԼԱՆԸԽԱ ԴԵՂՐԱՆՈՒ ԳՈՎՔ

Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

Հուքմաթ պահող էդ Կոփեցիք,
Պալի պուպու Շեխաղուբցիք,
Քջուր խմող Յոնջալվեցիք,
Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

Կանկառ ուտող Յոտնչորցիք,
Կովի սովոր Համզաշեխցիք,
Քրղու քոլող Յագրակեցիք,
Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

Իշու քըրթող էդ Մերբրրցիք,
Խոնախ պահող Շերվանշեխցիք,
Կնկա ծեծող Խոշգելդեցիք,
Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

Անժուռ շուրվա Խարաբշարցիք,
Ավզոտ յոռեր Խոթալվեցիք,
Գութան հանող Մաշտըլվեցիք,
Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

Սիսեռ ցանող Յապըրվեցիք,
Թրբի կողով Քաքաոլվեցիք,
Թանջուր խմող Սամարշեխցիք։
Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

Սրսուռ լաչի Փրքաշենցիք,
Տերտեր ծեծող Լդ Թեղուտցիք,
Թրքոտ փուշնք Խարաղբյցիք։
Է՛մ լե ղողան, է՛մ լե ղողան,
Է՛մ լե ղողան Զիարեթցիք։

6. ԳՈՏՆՊԱՐ

Զնգըռ-մնգըռ իմ տամպուրեն
Առա յելա քոշկ ու սարեն.
Ջուր մե խմի կարմիր կժնեն,
Կըսիս պադ մ՝էր յարոշ թշնեն։
Իմ տամպուրե՜ն, իմ տամպուրե՜ն—
Ձեննի թալեց քոշկի վերեն՝
Խարար մ՝առներ անուշ յարեն,
Թե խաբար մե չիգա յարեն՝
Էրթամ զիսի թալիմ քարեն։
Իմ յարն էն է՝ էրի-վերի,
Կը նմանի ջուն ու փերի,
Ընոր առնող մարդ չը խերի,
Կրակն յընկի ջանըս կերի։

7. ԴԵՐԸԿՈ

Դերըկոն իմ յար,
Դերըկոն քու յար,
Դերըկո ջան,
Դերըկոն հո՜յ նար,
Դերըկոն քո՜յ նար,
Դերըկո ջան։
Դերըկոն յելի
Կէրթեր արտեր,
Դերըկո ջան,
Թաժացեր է
Յարոշ դարդեր,
Դերըկո ջան։
Դերըկոն յելի
Կէրթեր ժախի,
Դերըկո ջան,
Անկըշներուց
Գինդ էր կախի,
Դերըկո ջան։
Դերկըոն յելի
Կէրթեր կանկառ,
Դերըկո ջան.

Դու յելեր իս՝ կէրթաս կանկառ,
Կը նմանիս զոզանի գառ։
Լե՜յլո, լե՜յլո, լե՜յլո խանե,
Լե՜յլո, լե՜յլո, լե՜յլո ջանե։

Դու յելեր իս՝ կէրթաս վերև,
Կը նմանիս մաղաշ սերև։
Լե՜յլո, լե՜յլո, լե՜յլո խանե,
Լե՜յլո, լե՜յլո, լե՜յլո ջանե։

Դու յելեր իս՝ կէրթաս մարագ,
Կը նմանիս մեղրած կարաղ։
Լե՜յլո, լե՜յլո, լե՜յլո խանե,
Լե՜յլո, լե՜յլո, լե՜յլո ջանե։

11. ՋԻՆՋ ՈՒ ՋԻ՞ՆՋ

Ջինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Ջոմա-ղոմա էր.
—Ջիմ լաչին տամ լողվորին,
Քոմա-քոմա էր։
Ո՛չ առավ, ո՛չ հավնեցավ,
Ջոմա-ղոմա էր.
Ո՛չ հանեց ծամթել ծովեն,
Քոմա-քոմա էր։

Ջինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Ջոմա-ղոմա էր.
—Ջիմ գոտին տամ լողվորին,
Քոմա-քոմա էր։
Ո՛չ առավ, ո՛չ հավնեցավ,
Ջոմա-ղոմա էր.
Ո՛չ հանեց ծամթել ծովեն,
Քոմա-քոմա էր։

Ջինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Ջոմա-ղոմա էր.
—Ջիմ շապիկ տամ լողվորին,
Քոմա-քոմա էր։
Ո՛չ առավ, ո՛չ հավնեցավ,
Ջոմա-ղոմա էր.
Ո՛չ հանեց ծամթել ծովեն,
Քոմա-քոմա էր։

Ջինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Ջոմա-ղոմա էր.
—Ջիմ պագիկ տամ լողվորին,
Քոմա-քոմա էր։
Ո՛չ առավ, ո՛չ հավնեցավ,
Ջոմա-ղոմա էր.
Ո՛չ հանեց ծամթել ծովեն,
Քոմա-քոմա էր։

Ջինչ ու Ջի՞նչ տամ լողվորին,
Ջոմա-ղոմա էր.
—Ջիմ ծոցիկ տամ լողվորին,
Քոմա-քոմա էր։
Հա՛մ առավ, հա՛մ հավնեցավ,
Ջոմա-ղոմա էր.
Հանեց ծամթելն ի ծովեն,
Քոմա-քոմա էր։

12. ԾԱՄԹԵԼՆ Ի ԾՈՎԵՆ

—Ծամերուս ծանդրութենեն
Ծամթել կտրավ, յրնկավ ի ծով։
—Լողվորի մեկ լե ես իմ,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ գլխու ֆաթեն կիտամ.
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ գլխու ֆաթեն,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ վզի վզնոց կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ վզի վզնոց,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ թուխ-թուխ աչքեր կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ թուխ-թուխ աչքեր,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ շամամ ծծեր կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ շամամ ծծեր,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ սրտի սրտնոց կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ սրտի սրտնոց,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ թևի թևնոց կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ թևի թևնոց,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ սերսուփ շապիկ կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ սերսուփ շապիկ,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ սրտի սավդեն կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Ի՛նչ էնիմ սրտի սավդեն,
Ջըմ հանի ծամթելն ի ծովեն։

—Իմ սիվտակ ծոցիկ կիտամ,
Դե՛, հանե ծամթելն ի ծովեն։
—Քու սիվտակ ծոցիկ կառնիմ,
Հանիմ ղծամթելն ի ծովեն։

13. ՀԱՆԱՆԵՐ

Հանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր,
Ջանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր։

Ա՛ղջի, քըղի նոր տեսա,
Գնա քո պապուն խոսա,
Ջիս էնե ուրին փեսա.
Հանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր,
Ջանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր։

Ա՛ղջի, քու ասու սիրուն,
Ջէնիս ղիսի էրելուն,
Թալիս ֆետև սարերուն.
Հանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր,
Ջանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր։

Ա՛ղջի, շող-շաֆղ իս թափի,
Բարակ մեջք շալ իս կապի,
Ջիմ խեղճ սրտիկն իս խարի.
Հանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր,
Ջանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր։

Ա՛ղջի, քու կանանչ արև,
Յընցար՝ չը տվիր բարև,
Պագիմ քու ղնչի վերև.
Հանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր,
Ջանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր։

Առավոտ՝ թափիր փոշին,
Ջիմ ղոշ ղարկիմ քու ղոշին,
Ինչոր հալվեն մրջ լոշին.
Հանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր,
Ջանանե՛ր, նանե՛ր, նանե՛ր։

14. ՀԱ՛ ՇՈՐՈՐԱ

Հա՛ շորորա, ասլի զադա,
Ես ի՞նչ ունիմ դարդից սադա,
Քու ծոցն ընձի նխշուն ֆոդա.
Հա՛ շորորա, մանրատոտիկ։
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

Ծամ իս թորկի էրան-էրան,
Բոլոր երես, պըղտիկ բերան,
Քու տանողի տնիկ վերան.
Հա՛ շորորա, մանրատոտիկ։
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

Դու կաներ իս գարպահի դուռ,
Մնչքդի մընի խանչարի բուռ,
Ջիս էրեր իս սավդալու ծուռ.
Հա՛ շորորա, մանրատոտիկ։
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

Դու յելեր իս հալա-հուլա,
Քու ծծերն ին ամպի քուլա,
Աչքսի տեսի, սիրտսի զուլա.
Հա՛ շորորա, մանրատոտիկ։
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

Արար-աշխար քըղի գովեն,
Ըսկի չելնաս ցըվքի հովեն,
Քու ծամ քաշած Վանու ծովեն.
Հա՛ շորորա, մանրատոտիկ։
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

Ձեր տան յետև քառսուն կարաս,
Քառսուն կարսի գինին էր խաս,
Յրմեն թասին՝ պագիկ մե տաս.
Հա՛ շորորա, մանրատոտիկ,
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

Քու պապ, կըսին, յերեսպնդուկ,
Քու մամ, կըսին, ջալագնդուկ,
Ա՛րի, գողտու մտնանք սնդուկ.
Հա՛ շորորա, մանրատոտիկ։
Իմ յար յըմնուց լե խորոտիկ։

15. ՀԱՎՔՈՒԿ ՎԸՐ ԾՈՎՈՒՆ

Հանոր, հանանո՛ր,
Ջանոր, ջանանո՛ր։

Հավքուկ վըր ծովուն, անունն էր արոր,
Վզիկն էր կարմիր, սրտիկ սևավոր.
Կապիմ ընչարեն՝ էրթամ հլտ ինոր,
Էն իմ գարդ կինա, ես զինամ ինոր։

Հանոր, հանանո՛ր,
Ջանոր, ջանանո՛ր։

Ես՝ վերու ջեյրան՝ վըր Սասնա սարին,
Թվընքով զարկին բրինդար էրին.
Խաբրիկ մե ճամփեք իմ հեռու յարին,
Դեղ առնե, յիգա վըր բրինդարին։

Հանոր, հանանո՛ր,
Ջանոր, ջանանո՛ր։

Ստամբոլ քաղաք՝ վըր սև ծովերուն,
Խարիբ մե ունիմ յետև սարերուն,
Խարիբին մեռնիմ, ուր ճամպըներուն,
Կարո՛տ իմ մանցի թուխ-թուխ աչքերուն։

Հանոր, հանանո՜ր,
Ջանոր, ջանանո՜ր։

Հասեր է ցորեն, հասեր է գարին,
Բոսան մե դրի վրը դեմի գարին,
Ասված ավիրե իդամլու տարին, -
Շամամ մե չէղավ՝ մամփենք իմ յարին։

Հանոր, հանանո՜ր,
Ջանոր, ջանանո՜ր։

Ձեռներս իմ դրի Հալարու հինա,
Քու ճամպեն կիշկիմ, աշխարհ լե դինա,
Արի՛, յա՜ր, արի՛, խռով մը՛ մնա,
Ասարվորիս բան մըգի չը մնա։

Հանոր, հանանո՜ր,
Ջանոր, ջանանո՜ր։

16. ՀԱ՛, ՏԱՐԱ՜Ն

Հա՛, տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն,
Քանդին ջիգարսի, տարա՜ն.
Առաքելոց ըխտավոր,
Սըր Կարապետ իմ քավոր.
Հա՛, տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն,
Քանդին ջիգարսի, տարա՜ն։
Փուշին կապի, Թորկի պուխ,
Աժեր Մուշն ու Բուլանուխ.
Հա՛, տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն,
Քանդին ջիգարսի, տարա՜ն։
Բորիկ մի՛ քելե, փուշ է,
Իմ յարն յըմնուց անուշ է։
Հա՛, տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն,
Քանդին ջիգարսի, տարա՜ն։
Աղ՛ջի, քու անուն Գուլում,
Էս ի՞նչ սև օր ու զուլում.
Հա՛, տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն,
Քանդին ջիգարսի, տարա՜ն։
Ավրեր քու տուն, դրվեր դուռ,
Ջիսի չէներ սավդի ծուռ.
Հա՛, տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն,
Քանդին ջիգարսի, տարա՜ն։

17. ՀՈ՜Յ ՆԱՐ

Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար,
Վառեց զիս էդ մշեցին,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար,
Ձեր դռնով քշիմ իմ ձին։
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար.
Ա՛ղջի, քու անուն Սառե,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար.
Աչքերդի խառ ու մառ է,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար։
Նստեր ին՝ բուրգ կը դվին,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար.
Իմ մեղք՝ քու մամու վզին,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար։
Աղ՛ջի, գիս ձեր տուն կանչե,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար.
Քու դարդն ու գավին ի՞նչ է,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար.
Արծաթ ընդերով աղջիկ,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար.
Օսկի դնդերով աղջիկ,
Հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար։

18. ՄԱՏԻԴ ՄԱՏՆԻՔ ՄԱՎԻ Է

Մատիդ մատնիք մավի է,
Ա՛ղջի, էս ի՞նչ դավի է։

Ա՛ղջի քու տսու սիրուն,
Ջէնիս զիսի էրերուն,
Թալիս յետև սարերուն,
Ցընկնամ մեծ-մեծ քարերուն.
Մատիդ մատնիք մավի է,
Ա՛ղջի, էս ի՞նչ դավի է։

Ջուն էր էկի սարերուն,
Հալավ թափավ քարերուն,
Կուժն էր յտրոջ ձեռներուն,
Բերեց մոտիկ ջրերուն.
Մատիդ մատնիք մավի է,
Ա՛ղջի, էս ի՞նչ դավի է։

Լցեց կուժնի կարմրրուն,
Վերուց, գրեց փիջերուն,
Թափավ շեկիկ ծամերուն,
Իջավ շամամ ծծերուն.
Մատիդ մատնիք մավի է,
Ա՛ղջի, էս ի՞նչ դավի է։

Հա՜յ, կաքվուկ մըջ քարերուն,
Ծոցդի բացի աստղերուն,
Հայ՜, էրերուն, էրերուն,
Ժուռ գիկամ ձեր դռներուն.
Մատիդ մատնիք մավի է,
Ա՛ղջի, էս ի՞նչ դավի է։

19. ՅԱՄԱ՜Ն, Ա՛ՊՈ, ԿԱՐԳԵ ՁԻՍ

Ջոլի կռունկ՝ յերկեն վիզ,
Յամա՜ն, ա՛պո, կարգե զիս.
Հալվոր մարդու մի՛ տա զիս,
Կշտիս քնի՝ մոռնա զիս։

Զոլի կոունկ՝ յերկեն վիզ,
Յամա՜ն, ա՛պո, կարգե զիս,
Կարդըցվորի մի՛ տա զիս,
Գիր կը կարդա՝ մոռնա զիս։

Զոլի կոունկ՝ յերկեն վիզ,
Յամա՜ն, ա՛պո, կարգե զիս,
Ուրնչբար մարդու մի՛ տա զիս,
Կերթա դութան՝ մոռնա զիս։

Զոլի կոունկ՝ յերկեն վիզ,
Յամա՜ն, ա՛պո, կարգե զիս,
Զարչի մարդու մի՛ տա զիս,
Օսկի համրրե մոռնա զիս։

Զոլի կոունկ՝ յերկեն վիզ,
Յամա՜ն, ա՛պո, կարգե զիս,
Թարգի մարդու մի՛ տա դիս,
Ասեղ թելե՝ մոռնա զիս։

Զոլի կոունկ՝ յերկեն վիզ,
Յամա՜ն, ա՛պո, կարգե զիս,
Ջուլյակ մարդո՛ւ դու տու դիս,
Մքուկ թալե՝ պսգե զիս։

20. ՅԱՐԸՄ ԳՈՐԱՆԻ

Լե, լե, լե, լե, լե, լե,
Յարըմ գորանի.
Լո, լո, լո, լո, լո, լո,
Դո՛ստըմ գորանի։

Մշու դաշտ կըսեն՝ հա՜յ,
Խորոսկի տեղ էր.
Էրկուս մեկ շապիկ, հա՜յ,
Փոզպըտիկ նեղ էր.
Յարրմ գորանի,
Դո՛սարմ գորանի։

Բոստան իմ ցանի, հա՜յ,
Վըր դեմի դարին,
Շամամ մե չէղավ, հա՜յ,
Ճամփենք իմ յարին.
Յարրմ գորանի,
Դո՛սարմ գորանի։

Մտեր իս յեդին, հա՜յ,
Հազող կը քազիս,
Շամամ ծծերով, հա՜յ,
Շաքար կը մաղիս.
Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Քամբախ Բուլանուխ, հա՜յ,
Շատ անուշ տեղ էր,
Ուր ջուր օր կըսեն, հա՜յ,
Հիվընդի դեզ էր.
Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Ծծերդի ուռեր, հա՜յ,
Ես կըսենք նուռ էր,
Ձեռ տարա՝ քաղիմ, հա՜յ,
Դու ըսիր՝ ժուռ էր.
Յարրմ գորանի,
Դո՛սարմ գորանի։

Թե ժուռ, թե հասած, հա՜յ,
Ընձի խաբուլ էր.
Քու լեզվին մեռնիմ, հա՜յ,
Անուշ բլբուլ էր.
Յարրմ ղորանի,
Դո՛ստրմ գորանի։

21. ՅԱՐԸՄ ԳՈՐԱՆԻ

Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Մշու դաշտ կըսեն՝ խորոսկի տեղ էր,
Էրկուս մեկ շապիկ՝ փոզպըտիկ նեղ էր.

Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Քամբախ Բուլանուխ մանտր ու բեգ գեղ էր,
Ուր ջուր օր կըսեն՝ հիվանդի դեղ էր.

Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Դարուն էր գացեր, դարձեր էր ամառ,
Կարմիր էր խնձոր, թոռմեր էր քամար.

Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Աշուն էր էկի, թողած են խոշեր,
Կարմիր էր սոլեր, պխած են պոշեր.

Յարրմ գորանի,
Դո՛սարմ ղորանի։

Բոստան իմ ցանի անտեր դար ու կող,
Ձեղավ շամամ մե ճամփենք յարոջ փոխ.

Յարրմ գորանի,
Դո՛ստրմ գորանի։

Քու մեյդան ճակատ պադելու տեղ էր,
Քու սունչ, օր սնչաս՝ իմ հոգուն դեղ էր։

Յարքմ դորանի,
Դո՛ստրմ գորանի։

22. ՆԱՐ—ՆԱՐ

Տղան

—Աղ՛ջի, քու անուն Մայրան,
Նար- նար- նար- նար.
Էրթանք սարեր ի սեյրան,
Նար- նար- նար- նար։

Աղջիկը

—Տղա՛, անունդ Արմենակ,
Նար- նար- նար- նար.
Յուղի ի՞նչ կէնիս մենակ,
Նար- նար- նար- նար։

Տղան

—Աղ՛ջի, կէնիմ գիր ու թուղթ,
Նար- նար- նար- նար.
Սրբ Կարապետ էրթանք ուիտ,
Նար- նար- նար- նար։

Աղջիկը

—Տղա՛, դու չի՞ս էն ուղեն,
Նար- նար- նար- նար.
Զարկեր էր փեսի ջղեն,
Նար- նար- նար- նար։

Տղան

—Աղ՛ջի, քըզի բերիմ նուռ,
Նար- նար- նար- նար.
Բարով էրթանք ժամու դուռ,
Նար- նար- նար- նար։

Աղջիկը

—Տղա՛, կարդա քերական,
Նար- նար- նար- նար.
Քու յարն է ուաս տարեկան,
Նար- նար- նար- նար։

Տղան

—Աղ՛ջի, կարինք մեր խսեն,
Նար- նար- նար- նար.
Ն՛ս իմ քու մամու փեսեն,
Նար- նար- նար- նար։

23. ՆԻՆԸՄ, ՆԻՆԸՄ, ՆԻՆԱՐԵ

Նինըմ, նինըմ, նինարե,
Նինարե, նինարե, նինարե.
Յրսօր լուսնակ նորեր է,
Նինարե, նինարե, նինարե.
Նորեր է, բոլորեր է,
Նինարե, նինարե, նինարե.
Յարոջ գոտին կորեր է,
Նինարե, նինարե, նինարե.
Կորեր է, մոլորեր է,
Նինարե, նինարե, նինարե։
Ա՛ղջի, էդ քու սիվտակ ծոց՝
Նինարե, նինարե, նինարե,
Տղեկներուն դարդ ու խոց,
Նինարե, նինարե, նինարե։
Առվե-առու իմ թոր,
Նինարե, նինարե, նինարե,
Քառասուն կաքավ իմ բռնի,
Նինարե, նինարե, նինարե.
Անուշ յարոջն իմ ճամպի,
Նինարե, նինարե, նինարե,
Ա՛ղջի, ընձի մը՛ խարի,
Նինարե, նինարե, նինարե։
Հե՛րք է հալինք ու մաջինք,
Նինարե, նինարե, նինարե.
Ես ու դու շա՞տ ույմիշ ինք.
Նինարե, նինարե, նինարե։

24. ՋՈՒՄԼԱՄԵՐ

Ջումլամեր, ջան Ջումլամեր,
Ջումլամեր, ջան Ջումլամեր.
Արե՞ք, արե՞ք, արե՞ք, էրթանք Ջումլամեր,
Դառձե՞ք, դառձե՞ք, դառձե՞ք էրթանք
Ջումլամեր։

Լուսնակ էրեկ ու ցերեկ,
Կանչեք, իմ յարոջ բերեք.
Զրզի մեծ մուժդա կիտամ,
Խորոտիկն ընձնով էրեք.

Արե՞ք, արե՞ք, արե՞ք, էրթանք Ջումլամեր,
Դառձե՞ք, դառձե՞ք, դառձե՞ք էրթանք
Ջումլամեր։

Թունդրեն գելներ բարակ ծուխ,
Բիլոռ աչքեր թուխ ու մուխ,
Ընդրա պես հատ մն չկա
Մշուց չուրի Բուլանուխ.

Արե՜ք, արե՜ք, արե՜ք, էրթանք Ջումլամեր,
Դառձե՜ք, դառձե՜ք, դառձե՜ք էրթանք
Ջումլամեր։

Առաքելոց գացի ուխտ,
Մոմեր վասի ջուխտե-ջուխտ.
Ըներ իմ՝ կառնիմ ինոր,
Թլ՛ոլ մամ էնե գիր ու թուղթ.

Արե՜ք, արե՜ք, արե՜ք, էրթանք Ջումլամեր,
Դառձե՜ք, դառձե՜ք, դառձե՜ք էրթանք
Ջումլամեր։

Բլբուլ է՝ ծառի վրեն,
Կաքավ է՝ սարի վրեն,
Ես ու էն ասնեք դիրար՝
Ջոր դեանի, քարի վրեն.

Արե՜ք, արե՜ք, արե՜ք, էրթանք Ջումլամեր,
Դառձե՜ր, դառձե՜ր, դառձե՜ք էրթանք
Ջումլամեր։

25. ՅՈՒՐՆ Է ՅԵԼԻ

Ջուրն է յելի առվըներ,
Աստված վերցուս զպառվըներ։
Ջուրն է յելի ջաղջըներ,
Աստված պահե զաղջըներ։
Ջուրն է յելի շոր կորդեր,
Աստված պահե զխորդեր։
Կանանչ վարոց տղեկներ,
Կարմիր խնձոր աղջըկներ,
Թառ ու թեփսի կնկրտիք,
Ուտի՜ք-չուտի՜ք՝ կուվրտիք։

26. ՎԱՐԴԻ ԲԼԲՈՒԼ

Աղջիկը

Վարդի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խոռվավ, գնաց Վան.
Գիշերսի ես դուս յելա,
Լուսնակն անուշ կը ցոլա.
Շաֆղն էր զարկի վըր սարին,
Նման յարոջ դիդարին.
Վարդի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խոռվավ, գնաց Վան։

Տղան

Առվե-առու իմ թոի,
Քառասուն կաքավ իմ բանի,
Ձեռք ու աման չինի էր,
Վերցի խմի՝ դինի էր.
Աղ՛ջի, զինուց անուշ իս,
Հա՛մ խնկենի, հա՛մ նուշ իս.
Վարդի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խոռվավ, գնաց Վան։

Աղջիկը

Դինի, դինի, դինըսաան,
Ցարուկ ունիմ շահրբստան.
Սարեր բռնի՝ ձուն դիկա,
Ախպեր քրոջ սուն դիկա.
Հե՛ռու ախպեր, ջա՛ն ախպեր,
Մարգրիտ ու մարջան տխպեր.
Վարդի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խոռվավ, գնաց Վան։

Տղան

Ջուն է էկի սարերուն,
Ես հիվանդ իմ քու սիրուն,
Վարդ իմ քաղի ձեր արտեն,
Թոլկիմ կորիմ քու դարդեն.
Լուսնակն յընկավ լուս ու լուս,
Կանչեք յարոջ յիգա դուս.
Վարդի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խոռվավ, գնաց Վան։

27. ՏՈ՛, ՇԱ՜Ն ԿՆԻԿ

Տո՛, շա՜ն կնիկ, քու հեր հորիմ,
Մածուն դուզիմ, թա՜ն կը բերես,
Թիզ մե բորբոս, մուկն ի յերես։

Կնիկ մ՛ունիմ՝ անուն Ջոնե,
Գիշեր-ցերեկ կը զվոնե,
Մոութն ի կախ, սիրտ կը խառնե։

Տո՛, շա՜ն կնիկ, պարտընքատեր իմ,
Դալմա գուզիս, յու՜ստի բերիմ,
Դու չը դի՜նաս՝ դոստի տեր իմ։

Ջոնեն գիլեր, յազմա գուզեր,
Սելի դողեր—խզմա գուզեր,
Կոտրուկ յոտաց—ջղմա գուզեր։

Տո՛, շա՜ն կնիկ, մի՛ լա, մի՛ լա,
Էրթամ բերիմ թոփ մե շիլա,
Իմալ խուրթնի՝ կը փիլփիլա։

28. ՓԱՓՈՒՌԻ

Փափուռի, ջա՛ն փափուռի,
Փափուռի, ջա՛ն փափուռի,
Փափուռ նստի դուռ՝ դիլա,
Փափուռի շապիկ շիլա.
Գիշեր խալտի՝ դուս յելեր՝
Լուսնակն անու՞շ կը ցոլեր.
Կը ցոլեր վըր Գոնդլկան,
Ջէկան ընդոր ֆուլընկան.
Փափուռին ի՞նչ սար պիտեր,
Ընդոր յար ու ճար պիտեր.
Փափուռի, ջան փափուռի,
Փափուռի, ջան փափուռի,
Փափուռ նստի դուռ՝ դիլա,
Փափուռի շապիկ շիլա։